

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Դ. Յ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈԽԱՌՅԱԼ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ (ՏԵՐՄԻՆԱԿԵՐՏՄԱՆ) ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գիտատեխնիկական տերմինների թարգմանության (տերմինակերտման) առանձնահատկություններին նվիրված ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթի ուսումնասիրություններ հայ լեզվաբանության մեջ չկան: Թարգմանության տեսությանը նվիրված հատուկենտ ուսումնասիրությունները նման խնդիրների չեն անդրադառնում կամ անդրադառնում են մասնակիորեն [1]: Մինչդեռ գիտատեխնիկական տերմինները հիմնականում ստեղծվել են թարգմանության և թարգմանության ընթացքում տերմինակերտման ճանապարհով: Մասնագիտական դասընթացների պահանջով առաջ եկած թարգմանական, այնուհետև ինքնուրույն ուսումնական գրականությունը դարձավ հայերեն գիտատեխնիկական, այդ թվում նաև քննվող տերմինաբանության զարգացման հիմնական ուղին:

Գիտատեխնիկական գրականության տերմինագործածության հիմքն այսօր էլ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան» է [2], որը, հայ իրականության մեջ մեքենագիտական-մեքենաշինական ուղղվածությամբ լիահավաք բառարան չլինելու պարագայում, նաև այս բնագավառի մասնագետների ուղեցույցն է: Այս նկատառումով բառարանի բառամթերքի հիման վրա քննել ենք հիմնականում մեքենագիտական-մեքենաշինական, առանձին դեպքերում՝ նաև հարակից բնագավառների տերմինների թարգմանության մի քանի առանձնահատկություններ [3]:

Իր կառուցվածքով և գիտատեխնիկական տերմինների ընդգրկմամբ լինելով լավագույնը հայ իրականության մեջ՝ «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» մեծապես նպաստել է ամենատարբեր բնագավառների տերմինների ու տերմինային ճյուղավորումների հավաքման, կերտման և ըստ տերմինահամակարգերի դրանց դասակարգման բարդ ու դժվարին խնդրի լուծմանը [4]: Բառարանն ամփոփում է փոխառյալ տերմինների միանգամայն հաջողված թարգմանություններ, որոնք մերվել են մեր լեզվին և լիովին բավարարում են տերմինակերտման պահանջները: Սակայն հաջողված հազարավոր տերմինների կողքին նույն բառարանում տեղ են գտել նաև անհաջող, հայերենի լեզվական օրինաչափություններին անհարիր, հասկացության իմաստը լիովին չարտահայտող և հենց դրանով էլ ոչ կենսունակ տերմիններ, ինչպիսին են *բաժնյակ* (деланка), *բափժու* (литой), *թեքատ* (скат), *լավորակիչ* (кондиционер), *թխած* (припек), *դիմկալ* (маска), *կամրջաշին* (подкос), *լրիկ* (банкет), *կավար* (гонт), *ծոծրակում* (затыловка), *ծովազնացականություն*

(мореходность), լուծանզուր (экстракт), դրսույթ (экстерьер), լուսակ (спектр), պարզոն (деконтатор), միտանկար (негатив) և այլն: Նույն բառարանում փոխառյալ տերմինների գերակշիռ մասի համար առաջարկված հայերեն թարգմանությունների կամ նորակերտումների մի մասը, սակայն, ուսումնական (մասնագիտական) գրականության մեջ այսօր էլ հանդիպում է փոխառյալ տեսքով: Այսինքն՝ նկատելի է վերադարձ դեպի փոխառությունը:

Թարգմանության առկայության դեպքում վերադարձ դեպի փոխառությունը կատարվում է [5], երբ չեն պահպանվում թարգմանության (տերմինակերտման) երկու հիմնական ելակետային սկզբունքները [3]: Թարգմանված տերմինն անհաջող է, եթե

1. ճիշտ և լիակատար չի արտահայտում փոխառության իմաստը՝ հասկացությունը:

ա) թարգմանությունը կարող է արտահայտել փոխառյալի համընդհանուր իմաստը առանց դրա նրբերանգների, օրինակ *информация*–տեղեկատվություն, բայց բառն ընդգրկում է նաև՝ տեղեկություն, տեղեկույթ իմաստը, *процессия*–կոնապտույտ, բայց բառն ունի նաև առանցքապտտական (*процессионный*) իմաստը և այլն:

բ) թարգմանությունը կարող է փոխառյալի մեկ մասնավոր իմաստն արտահայտել, օրինակ *ագրեգատ* – 1. միացք, 2. զանգված, ամորտիզացիա – 1. մարում, 2. մեղմում, անկեր – 1. խարիսխ, 2. որմնակապ, տրակտ – 1. ուղե-սարքվածք, 2. տրակտ և այլն:

գ) թարգմանությունը կատարելագործելու ձգտումով առաջ են բերում հոմանիշներ բազմանունություն: Օրինակ՝ *ամբարծիչային* II *ամբարծիչավոր*, *փոկային* II *փոկավոր*, *նմանակություն* II *համանմանություն*, *կցվանքային* II *կցվանքի*, *քանդում* II *կոտրում* II *ճեղքում*, *ծկուն* II *ծզուն* և այլն:

դ) տարբեր հասկացությունների թարգմանվում են միևնույն տերմինով՝ առաջացնելով համանունություն, որը շփոթության տեղիք կարող է տալ. օրինակ՝ *կանգառք* (остановка)–*կանգառք* (выстой), *կտրիչ* (резец)–*կտրիչ* (рубилка), *կտրում* (резание)–*կտրում* (отрезка)–*կտրում* (прорез)–*կտրում* (среэ), *միացք* (агрегат)–*միացք* (соединение), *միացություն* (соединение)–*միացում* (соединение), *անցքալայնում* II *անցքալայնիչ* (раскатка), *ամրակապում* II *ամրակապ* (крепление), *ամբարծիչային* II *ամբարծիչի* (крановый), *անցքահատ* (бородок)–*անցքահատ* (пробойник) և այլն:

ե) թարգմանությունը հնարավորություն չի տալիս ստեղծելու տերմինային ճյուղավորումներ. օրինակ *амплитуд*–*լայնույթ* II *աշխատալայնք*, *լրիվ լայնույթ*, *սկզբնական լայնույթ*, բայց՝ *ալիքի ամպլիտուդ*, *агрегат*–1. *միացք* (մբ.), 2. *զանգված* (երկր.), բայց՝ *ագրեգատային*, *аналог*–*նմանակ*, բայց՝ *անալոգաթվանշանային*, *կոնտակտ*–*հպակ*, բայց՝ *նախակոնտակտային* և այլն:

2. թարգմանությունը չի կատարվել լեզվական օրինաչափությունների պահպանմամբ:

ա) հասկացության իմաստն արտահայտող արմատի հետ գործածվել է անհամապատասխան ածանց. օրինակ՝ ցամաքորդ, հավաքորդ, հավաքոց, արգելուկ, կանգառում, եռուցք և այլն:

բ) գործուն ածանցն օգտագործվել է հասկացության իմաստը լիակատար

չարտահայտող արմատի հետ, օրինակ *անեքք* (безнапорный), *անմնացք* (невыхет), *անկանգ* (безостановочный) և այլն.

գ) թե արմատը, թե ածանցը (կամ երկու արմատները) կարծես թե ճիշտ են ընտրված, բայց միասնության մեջ ստացվել է արհեստական, հայեցի լեզվամտածողությանը խորթ կառուցվածք. օրինակ *անլրիվություն* (неполнота), *անցումամանկ* (гайка, переходная), *թռիչքարան* (аэродром), *մեղամաս* (перезим, перезвон), *կանգաշարժ* (выбег) և այլն.

դ) թարգմանությունը չի ապահովում տերմինակերտման պահանջներից մեկը՝ հուզական երանգի բացակայությունը, ինչպես և բառի գեղագիտական կողմը, օրինակ *ծայրոց*, *խրոց*, *մտոց*, *ապագրգրում*, *հոպնակ*, *տափուկ* և այլն:

Բերված անհաջող թարգմանությունները մեծամասամբ կրում են օտար լեզվամտածողության ազդեցություն: «Օտար լեզվամտածողության ներթափանցումների աղբյուրը հիմնականում անճաշակ, ցածրորակ թարգմանություններն են» [6]:

Թարգմանության ընթացքում նոր տերմինը, ըստ Ն. Չերուրաշկինի, կարող է ի հայտ գալ երեք ճանապարհով. 1) տերմինի ներմուծում, ա) տերմինի ստեղծում, բ) պատճենում, 2) տերմինի արտահայտած հասկացության նկարագրում, 3) փոխառություն և նրա հնչյունական կամ գրաբանական յուրացում [7]:

Բոլոր երեք կետերում համակարծիք լինելով հեղինակի հետ՝ մեր համոզմամբ՝ բ) ենթակետը պիտի ձևակերպվի որպես տերմինակերտում թարգմանության ընթացքում, որը կարող է համընկնել կամ չհամընկնել բնօրինակին: Այսինքն՝ թարգմանությունը կարող է կատարվել երկու լեզուներում համարժեք կամ անհամարժեք միավորներով [8]:

Ասվածից հետևում է, որ թարգմանության ընթացքում կարող են առաջանալ անհամապատասխանություններ բնօրինակ տերմինի և թարգմանված համարժեքի միջև: Այդ անհամապատասխանությունների քննությամբ տարբերակել ենք գիտատեխնիկական տերմինների թարգմանության հետևյալ առանձնահատկությունները.

1. թարգմանող լեզվում տերմինացվող բառը բառապաշարի նույն շերտի բառ է, ինչ որ թարգմանվող տերմինն է. տեղի է ունենում իմաստային թարգմանություն համարժեք միավորներով. օրինակ *ատամ* – зуб, *բոունք* – кулачок, *գոգ* – впадина, *զույգ* – пара և այլն.

2. թարգմանությունը կատարվում է մասնակիորեն համարժեք միավորներով. ա) տերմինը վերարտադրում է հասկացությունը՝ զուտ արտաքին կողմի հեռավոր նմանությամբ. օրինակ *երիթ* – шпонка, *հաստոց* – станок, *շարժաթև* – шатун և այլն.

բ) տերմինը վերարտադրում է հասկացությունը՝ արտաքին կողմի ու գործառույթի համադրմամբ. օրինակ *պնդողակ/մանեկ* – гайка, *տափողակ* – шайба, *պտուտակ* – винт, *գամ* – заклепка և այլն.

3. թարգմանությունը կատարվում է թարգմանող լեզվի բառակազմական օրինաչափություններին համապատասխան, տեղի է ունենում տերմինակերտում թարգմանության ընթացքում. ա) թարգմանվող և թարգմանող լեզուների լեզվամիջոցներն ու բառակազմության եղանակները չեն համընկնում կամ համընկնում են մասնակիորեն. օրինակ *ինքնակենտրոնադրվող* – самоцент-

прирующийся, *զամաքանդվող* – расклепанный, *հարմարակցած* – пригнанный, *շերտազատում* – отслоивание, *տեղաշարժ* – смещение, *հողակապ* – шарнир, *հավելանյութ* – присадка, *վրադիր* – накладка և այլն.

բ) թարգմանվող և թարգմանող լեզուների լեզվամիջոցներն ու բառակազմության եղանակները համընկնում են կամ նույնաբոժեք են. օրինակ *աշխատունակություն* – работоспособность, *երկարակեցություն* – долговечность, *հոգնածություն* – усталость, *սողք* – ползучесть, *առածական* – упругий, *ինքնաթիռ* – самолет, *հարվածային* – ударник, *բազմամուտք* – многоходовый և այլն.

4. երկու լեզուներում լեզվամիջոցները համընկնում են, բայց բառակազմության եղանակը, բառի «ներքին ձևը» խորթ է թարգմանող լեզվին, օրինակ *своевременно* – *յուրաժամանակ*, *приплавление* – *բափանցահալում* II *միջանցահալում*, *водонепроницаемый* – *անջրանցիկ* (ճիշտ կլինե՞ր՝ անջրաթափանց), *водонерастворимость* – *ջրանլուծելիություն*, *взрывобезопасный* – *պայթյանվտանգ* և այլն: Հայերենին հասուկ չեն թարգմանության վերջին 4–րդ եղանակով կազմված բարդությունները: Հայերենի բառակազմության օրենքներով չեն բացատրվում ոչ անջրանցիկ (ջրով չանցնո՞ղ, թե՞ ջուր չանցկացնող), ոչ ջրանլուծելիություն (սա կարող է թյուր ըմբռնվել՝ և՛ ջրի չլուծվելը, և՛ ջրում չլուծվելը) և ոչ էլ յուրաժամանակ բառերը: Վերջինը *своевременно* բառի «տառացի» թարգմանությունն է, որ կառուցված է հայերենի լեզվական օրինաչափություններին և հայ մարդու լեզվամտածողության անհարիր:

Վերն ասվածը թույլ է տալիս ընդհանրացնել տերմինակերտմանը կամ թարգմանությանը ներկայացվող հիմնական պահանջները.

1. *Տերմինի համակարգող հատկանիշների ապահովում կամ տերմինային ծյուղավորումների ստեղծման հնարավորություն:*

Գիտության ցանկացած բնագավառի տերմինաբանությունը տերմինների պարզ միազույնար չէ, այլ փոխկապակցված համակարգ՝ իր բնագավառի փոխպայմանավորված և փոխկապակցված հասկացությունների համակարգին համապատասխան: Յուրաքանչյուր տերմին ունի իր համակարգային և ստորակարգային տեղը տվյալ բնագավառի տերմինահամակարգում [9]: Յետևապես, ինչպես կերտված, այնպես էլ թարգմանված տերմինները պետք է կենսունակ լինեն տերմինային ծյուղավորումներ ստեղծելիս: Այս առումով թերի պետք է համարել նույն տերմինների հետևյալ թարգմանությունները.

ա) *հելիոփորագրություն* II *լուսափորագրություն*, *հելիոստատ*, *հելիոտրոն*, *հելիոգրաֆ* II *արևագրիչ*, բայց *արևահամակենտրոնիչ*, *արևախոհանոց*, *արևաբաղնիք*.

բ) *հետերոմորֆիտ*, *հետերոդիսպերս*, *հետերոդինացում* և *միաժամանակ՝ տարանուն*, *տարասեռ*, *տարածն*, *տարալիցք*.

գ) *ավիաընկերություն*, *ավիամոդել*, *ավիամեխանիկ*, *աերոբուս* և *օդագնացություն*, *օդաչու*, *օդանավ*, *ինքնաթիռ*, *սավառնակ* և այլն:

2. *Սեղմություն կամ տերմինային կաղապարի կարծություն:*

Երբեմն, հետամուտ լինելով տերմինի բովանդակությունն ամենայն մանրակրկիտությամբ հաղորդելու պահանջին, ստեղծվում են չափազանց երկար և հենց դրանով էլ անհաջող, ոչ կենսունակ տերմինային կաղապարներ: Օրի-

նակ անընդհատ գործողության բազմաիլային կիսավտոմատ հաստոց, առանց ելուստների զլանական մակերևույթի նկատմամբ կաղապարամատի տեղաշարժ, առանց ելուստների զլանական մակերևույթներով մեքենամաս, հակատանկային կառավարվող ռեակտիվ սարքերի մարտկոց և այլն:

3. *Տերմինի մեկնաստություն կամ տերմինի ենթատեքստային իմաստների բացառում:*

Այս իմաստով անհանձնարարելի է տերմինների բազմիմաստության առաջացումը գիտատեխնիկական հարակից բնագավառների տերմինաբանության մեջ [10]:

Քննվող տերմինաբանության մեջ բազմիմաստությունը պայմանավորված է տերմինների առաջացման արտալեզվական և ներլեզվական գործոններով: Մեքենագիտական և մեքենաշինական տերմինների մի զգալի մասը՝ իբրև տերմին, զուգահեռաբար գործածվում է շինարարական, մի մասը՝ օդազնացության ու նավագնացության, մյուս մասը երկրաբանության, տիեզերագիտության, մի որոշ մասը տեքստիլագործության մեջ և այլն: Բոլոր այն տերմինահամակարգերում, որտեղ թափանցում են մեքենաներն ու մեխանիզմները, մեքենաշինական սարքերն ու սարքավորումները և նրանց հետ կապված գործընթացները, կարող են տարբեր հասկացությունների համար գործածվել նույն տերմինները: Մեքենագիտական և մեքենաշինական տերմինների նման գործածությունն առաջ է բերում արտահամակարգային և հարահամակարգային բազմիմաստություն: Այս երևույթը պայմանավորված է տերմինի՝ իբրև հասկացության անվանման երկու բովանդակային և արտահայտության պլանների գոյությամբ: Բովանդակային կողմը կարող է արտահայտել ոչ միայն տվյալ տերմինահամակարգի, այլև գիտության այլ բնագավառների հասկացություններ, ըստ այդմ՝ տերմինը կարող է հասկացական-իմաստային առումով համակարգված ու պատճառաբանված լինել ոչ միայն իր, այլև մյուս գիտությունների տերմինահամակարգերում: Մինչդեռ տերմինի արտահայտության պլանը կարող է մնալ նույնը տերմինային տարբեր համակարգերում, որն էլ հենց արտահամակարգային կամ հարահամակարգային բազմիմաստության առաջացման պատճառ է դառնում:

Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ բազմիմաստության առաջացման արտալեզվական գործոն էր մեքենագիտության առաջացումը մեխանիկա գիտության հիմքի վրա, երբ որպես արդյունք՝ մեքենագիտությունը ժառանգեց առանցքային տերմինների մի նշանակալից քանակ մեխանիկայից, որն էլ, իր հերթին, ժառանգել էր ֆիզիկայից՝ առնչվող ստատիկայի, կինեմատիկայի, կինետիկայի, դինամիկայի բաժիններին: Մեքենագիտությունն ունի տերմինների ընդհանուր շերտ մաթեմատիկայի հետ, քանի որ հենվում է նաև նրա ուսումնասիրության մեթոդների վրա: Տերմինային այս շերտը կազմում է միջգիտական ընդհանուր և բազմիմաստ տերմինների շերտը ֆիզիկայում, մեխանիկայում, մաթեմատիկայում և մեքենագիտության մեջ:

Պայմանավորված տեխնիկայի նորագույն զարգացումներով՝ մեքենագիտության մեջ առաջացել են նոր բնագավառներ ու բաժիններ, որոնցից է, օրինակ, *մեխատրոնիկան*, որ հենված է էլեկտրոնիկայի և ավտոմատ կառավարման տեսությունների վրա և ներառում է վերջիններիս, ինչպես և կազմախո-

սության տերմինների համապատասխան շերտերը: Սրանով պայմանավորված՝ առաջացել են բազմիմաստ տերմինային փնջեր՝ կապված, օրինակ, մեխատրոնիկայի զարգացման մի դրսևորումը ներկայացնող քայլող, սողացող, խոսող, հաշվող և մարդկային մտավոր ու ֆիզիկական այլ գործողություններ ու շարժումներ ընդօրինակող-վերատադրող ռոբոտ-մեքենաների հետ:

Արտալեզվական գործոններով պայմանավորված՝ տերմինային բազմիմաստությունն առանձնապես կարող է ծավալվել մեքենաշինական տերմինահամակարգում: Գտնվելով արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի տերմինաբանության «խաչմերուկում»՝ մեքենաշինական տերմինահամակարգն անընդհատ կարող է համալրվել գիտության և հատկապես արդյունաբերության այլ ճյուղերի տերմիններով՝ միաժամանակ համալրելով այդ ճյուղերի տերմինահամակարգերը և հիմք տալով միջճյուղային բազմիմաստ տերմինների առաջացման:

Արտահամակարգային բազմիմաստության՝ ներլեզվական գործոններով պայմանավորված զարգացումը հետևանք է բառիմաստի փոփոխության՝ բառերի վերահիմաստավորման-տերմինացման, նաև՝ վերատերմինացման, ինչպես, օրինակ՝ մարմնի մասերի անվանումների տերմինացումն ու վերատերմինացումը:

4. Հոմանիշների (զուգահեռ ծևերի) բացառում:

Տերմինաբանության մեջ անթույլատրելի են հատկապես ներհամակարգային հոմանշության կամ բազմանունության դրսևորումները [11], որոնց «քննությունը ցույց է տալիս, որ տերմինային բազմանունությունը կամ թյուրիմացությունների տեղիք է տալիս, կամ տերմինաբանական անորոշություն է ստեղծում, որ նշանակում է, թե դեռևս կայունացած տերմին չկա» [9]: Տերմինային հոմանշության առաջացումը նույնպես պայմանավորված է արտալեզվական և ներլեզվական գործոններով:

ա) Ներհամակարգային հոմանշության առաջացման արտալեզվական գործոնը գիտական հասկացությունների անընդհատ ճշգրտման գործընթացն է, երբ հին տերմինն այլևս չի համապատասխանում գիտության առաջընթացին համաքայլ ճշգրտված հասկացության սահմանմանը, և առաջ է գալիս հասկացությունը նորովի տերմինավորելու անհրաժեշտություն:

բ) Ներհամակարգային հոմանշության առաջացման ներլեզվական գործոնը տերմինի արտահայտության պլանի կատարելագործման ձգտումն է, երբ տերմինը 1) լիակատար չի արտահայտում հասկացության էությունը, 2) անհաջող է կառուցված որպես լեզվական միավոր:

գ) Ներհամակարգային հոմանշության առաջացման ներլեզվական գործոն է նաև փոխառության՝ ժամանակի ընթացքում սեփական բառամիավորով փոխարինելու ձգտումը:

Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ ներհամակարգային հոմանշությունը հանդես է գալիս որպես նույնանշություն և համանշություն:

Ներհամակարգային նույնանշությունը դրսևորվում է նույն տերմինի հայերեն-հայերեն և հայերեն-փոխառյալ կրկնակների տարատեսակներով:

Տերմինների հայերեն-հայերեն կրկնակներ. ա) գոյականի սեռական հոլո-

վով և ածականական կրկնակներ՝ ամբարձիչի/ամբարձիչային/ամբարձիչավոր, առեղի/ առեղային, առանցքակալի/առանցքակալային, խուղակի/խուղակային և այլն. բ) ածականի՝ տարբեր ածանցներով կրկնակներ՝ արտակենտրոնավոր/արտակենտրոնային, գլոբոլիչ/գլոբոլշարար, բրթավոր/բրթոական/բրթընդային, բռնցքավոր/բռնցքային, խլարար/խլացուցիչ և այլն. գ) ածականի ածանցավոր և անածանց կրկնակներ՝ ակոսահան/ակոսավոր, արտակենտրոն/արտակենտրոնական, երկբունցք/երկբռնցքավոր, զազածուծ/զազածոծիչ և այլն. դ) նույն արմատի՝ ածանցով կամ այլ արմատով համադրված կրկնակներ՝ ամրակում/ամրակապում, ակոսատաշվածք/ներտաշվածք, կանգառ/կանգառում/կանգառք, արգելաձողիկ/արգելաչորսու, բազմամուտք/բազմընթաց, բեռնավորում/բեռնվածություն/բեռնվածք, գերավազք/գերապտույտ, ինքընթաց/ինքնագնաց, կախոց/կախվածք/կախում և այլն:

Տերմինների հայերեն-փոխառյալ (լիակատար և մասնակի*) կրկնակներ՝ անոմալիա/անկանոնություն, արմատոլի/ամրան, անիզոտրոպիա/անիզոտրոպություն, արքիոնոմետրական-առանցքաչափական, գլոբոլիզմ/գնդարդ, դետրեբեր/կլանվածքազատիչ, դոռն/միջուկ, դեկրեմենտ/նվազանք, դիսբալանս/հավասարակշռախախտում, էլենատոր/տրամբարձիչ, կուլիս/սահալծակ և այլն:

Բազմիմաստությունը և հոմանշությունը, այսպիսով, մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ դրսևորվում են տարբեր չափերով և տեսակներով: Նկատելի է հատկապես արտահամակարգային բազմիմաստությունը, որը բեն շփոթ չի առաջացնում, սակայն խրախուսելի չէ, քանի որ «...գիտական տերմինը պետք է ունենա սահմանափակ, հաստատապես արձանագրված իմաստ» [12]: Առանձնապես անհանձնարարելի են ներհամակարգային ավելորդ զուգաձևությունները, որոնք հակասում են տերմինագիտության «մեկ տերմինին մեկ իմաստ տվյալ տերմինահամակարգում» սկզբունքին [9]:

Ամփոփենք. թարգմանված, թե կերտված, տերմինը պետք է ապահովի, մի կողմից՝ հասկացության ամբողջականությունը, ստույգությունը, մյուս կողմից՝ լեզվական օրինաչափությունների ճշգրտությունը: Թարգմանության (տերմինակերտման) այս երկու փոխշաղկապված գործոններով են պայմանավորված տերմինի յուրացման և, հետևապես, նրա հաստատման գործընթացը (հաջողվածությունը) տերմինագործածության ոլորտում:

«Ուռն-հայերեն փոխառյալների կապակցում բառարանի» հիման վրա տերմինագործածության քննությանը թույլ է տալիս կատարել հետևություն: Վաղուց հասունացել է ժամանակը հայերեն նորաստեղծ տերմիններով համալրելու, ինչպես նաև սխալների շտկման, անհաջող կամ զուգաձևություններ ունեցող տերմինների հստակեցման առումով վերանայելու վերոհիշյալ բառարանը, ինչն այսօր կարող է հետապնդել ո՛չ միայն լեզվական գործնական խնդիրներ. օգտագործելով հայերենի բառաստեղծման հզոր համակարգը և միաժամանակ խթանելով նրա հետագա զարգացումը՝ մասնագետները մի քայլ ևս

* Մասնակի փոխառություն ասելով հասկանում ենք կիսապատճենումները:

առաջ կնդեն հայ գիտատեխնիկական միտքը: Քանզի տերմինաշինությունը ոչ միայն լեզվի հարստության և ճկունության արտահայտությունն է, այլև, առաջին հերթին, որևէ ժողովրդի գիտատեխնիկական առաջընթացի, հետևապես և նրա մտավոր զարգացման դրսևորումներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հակոբյան Ա.**, Թարգմանության տեսության հիմունքներ. Ղասազիք բարգմանչական բաժնի ուսանողների համար, Եր., Ասողիկ, 2003, 56 էջ: **Վարդանյան Ն.**, Թարգմանության տեսություն և մեթոդաբանություն. Ուս. ծեռն, Եր., Ասողիկ, 2004, 180 էջ: **Ստրելցովա Ի.**, Ուսներենի բառերի բառա-քերականական հատկանիշների լրիվ կամ մասնակի արտահայտումը հայերենում. Բառարանագրության և բառագիտության հարցեր, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 61-107:
2. **Հացագործյան Ջ., Դարբինյան Ա., Հովսեփյան Ն.** և ուրիշներ, Ուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Եր., 1988, 672 էջ:
3. **Պետրոսյան Հ. Յ.**, Հայերեն գիտատեխնիկական տերմինների թարգմանության (տերմինակերտման) մի քանի առանձնահատկություններ, ՀԴՏՀ տարեկան գիտաժողով. Նյութերի ժողովածու. Հ. 2, Եր., 2006, էջ 808-811:
4. **Ֆալաքյան Մ.**, Ուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Երևան, 1988, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1990, N3, էջ 186-189:
5. **Սուրիսյան Բ.**, Ժամանակակից հայերենի նորագույն փոխառությունները և նրանց թարգմանության ու հայերեն համագործնների հարցը, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1990, N 2, էջ 203-210:
6. **Մարության Ա.**, Բառային փոխառությունների և լեզվի մաքրության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1997, N 2, էջ 111-118:
7. **Чебурашкин Н. Д.**, Технический перевод в школе, М.: Просвещение, 1979, 319 с.
8. **Бархударов Л.**, Язык и перевод, М.: Международные отношения, 1975, 239 с.
9. **Աղայան Է.**, Տերմինագիտություն. Ղասախություն, Եր., 1978, 52 էջ:
10. **Շալունց Ռ.**, Տերմինային համանշխարհային և բազմիմաստություն. Լեզվի և ոճի հարցեր, Եր., 1984, հ. VIII, էջ 129-206:
11. **Սուրիսյան Ա.**, Հայերեն տերմինները և նրանց հոմանշության հարցերը, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1969, N 3, էջ 96-110:
12. **Лотте Д. С.**, Основы построения научно-технической терминологии, М.: Изд-во АН СССР, 1961, 153 с.

А. Ц. Петросян

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ПЕРЕВОДА (ТЕРМИНОСТРОЕНИЯ) АРМЯНСКИХ НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ ЗАИМСТВОВАННЫХ ТЕРМИНОВ

В армянском языкознании нет теоретических и практических исследований, посвященных особенностям перевода научно-технических терминов. Между тем, эти термины были созданы путем перевода и в основном в процессе перевода.

На материале "Русско-армянского политехнического словаря" (словарь до сегодняшнего дня служит основной при использовании терминов в научно-технической литературе) рассмотрены некоторые особенности перевода армянских научно-технических, в частности, машиноведческо-машиностроительных заимствованных терминов.

Показаны отклонения от основных принципов терминостроения, которые ведут к заимствованию.

Рассмотрены несоответствия между термином—оригиналом и переводом научно—технических терминов. Обобщены требования к переводу.

Рассмотрено терминопользование на материале "Русско—армянского политехнического словаря". Предложено дополнить словарь новыми терминами, исправить ошибки, пересмотреть те термины, которые переведены неудачно или имеют парные формы.

H. Ts. Petrosyan

ON SOME PROBLEMS OF TRANSLATION (TERM-FORMATION) OF THE ARMENIAN BORROWED SCIENTIFIC AND ENGINEERING TERMS

There are no theoretical and practical studies in Armenian linguistics devoted to the translation peculiarities of scientific and engineering terms, whereas those terms are mainly created by way of translation and term-formation while translating.

The state of the translation of the borrowed Armenian scientific and engineering terms, particularly the ones on Machine Science and Machine Building has been examined on the basis of the Russian Armenian Polytechnic Dictionary (even at present this dictionary serves as a basis application of terms in scientific and engineering literature). Cases of translation diverging from the main principles of term-creation when a return to borrowing is observed are shown. By way of examining the discrepancies between the original term and the equivalent translated, the peculiarities of translating the scientific and engineering terms have been considered, the main requirements to translation have been generalized.

As a result of examining the terms of the dictionary, a suggestion has been made to review the dictionary in the sense of completing it with new terms, correcting the mistakes, clarifying the terms having parallel forms.